

Աննա ԿՆՅԱԶՅԱՆ\*  
Գևորգ ԲԱՐՍԵՂՅԱՆ\*\*  
Yerevan State University

## ԼԵԶՎԱԿԱՆ ԱՆՀԱՏԻ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՆԳԼԻԱԿԱՆ ԵՐԳԻԾԱԿԱՆ ԽՈՍՈՒՅԹՈՒՄ

Սույն հոդվածում հետազոտվում են հաղորդակցմանը մասնակից անհատի խոսքում հուզարտահայտչական բաղադրիչի գենդերային տարբերությունները անգլիական կենցաղային անեկդոտներում: Դիտարկվում են լեզվական անհատի հուզագագացական առանձնահատկությունները, պարզաբանվում են տղամարդու և կնոջ հուզագագացական վարքի տարբերությունների հոգեֆիզիոլոգիական մեխանիզմները և այդ տարբերությունների դրսևորման ձևերը հաղորդակցության խոսքային մակարդակում: Բառային մակարդակում քննության են առնվում պիտակավորող-գնահատողական, ուժգնացնող բառերը, կոչական և փաղաքշական բառերը, նաև նորաբանությունները: Չնաբանական մակարդակում դիտարկվում են գոյականները, ածականները, դերանունները, բայերը և ձայնարկությունները: Ուսումնասիրության են ենթարկվում այն գերակա հույզերը, որոնք տղամարդիկ և կանայք առավել հաճախ են զգում: Հետազոտության մեջ ելակետային համարելով հուզականության կարգը, քննության ենք առնում հուզարտահայտչական միջոցները տղամարդկանց և կանանց խոսքում, մասնավորապես՝ վախի, զայրույթի, ուրախության, տխրության և զարմանքի հուզավիճակները:

**Բանալի բառեր.** գենդերային տարբերություններ, գենդերային հայեցակերպ, լեզվական անհատ, երգիծական խոսույթ, պիտակավորող-գնահատողական բառապաշար

### Ներածություն

Մարդու հույզերը և լեզվական միջոցների օգնությամբ դրանց արտահայտման մեխանիզմները միշտ եղել են գիտական հետազոտու-

\* [annaknyazyan@ysu.am](mailto:annaknyazyan@ysu.am) ORCID: 0000-0002-6880-9549

\*\* [barseghyan.gevorg@ysu.am](mailto:barseghyan.gevorg@ysu.am) ORCID: 0009-0004-8313-2005



This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

Received: 25/04/2024

Revised: 11/05/2024

Accepted: 20/06/2024

© The Author(s) 2024

թյունների առարկա (Носенко, 1979; Kramarae, 1981; Шаховский, 1995; Christie, 2000): Այդ բացառիկ երևույթը հետազոտում են բազմաթիվ գիտություններ՝ հոգեբանությունը, ֆիզիոլոգիան, սոցիոլոգիան, փիլիսոփայությունը, բարոյագիտությունը, բժշկությունը, լեզվաբանությունը, գրականագիտությունը:

Սոցիալական պայմանների (սոցիալական և մասնագիտական կարգավիճակի, տարիքի, հաղորդակցային դերի և այլն) հավասարության դեպքում տղամարդիկ և կանայք ընտրում են խոսքային վարքագծի տարբեր ռազմավարություններ: Միևնույն ժամանակ գենդերային դերերն ու նորմերը զգալիորեն փոփոխվում են՝ կախված հաղորդակցային իրավիճակից և խոսողի/գրողի նպատակից: Գոյություն չունի զուտ «տղամարդու լեզու» և զուտ «կնոջ լեզու»: Գենդերը «լողացող» չափորոշիչ է, որն ազդում է մարդու հաղորդակցային վարքագծի վրա: Այս առումով ավելի իրավաչափ է խոսել արական և իգական խոսքի գենդերային պայմանավորվածությամբ հաղորդակցային առանձնահատկությունների և հաղորդակցային վարքագծի ոճերի մասին, որոնք պատճառաբանված են անձնային գենդերային հատկություններով:

Սույն հոդվածում քննության է առնվում լեզվական անհատը (Караулов, 1987) կենցաղային անեկդոտներում գենդերային տեսանկյունից, քանի որ գենդերը՝ որպես հասարակության կողմից տղամարդու և կնոջ դերերի, վարքի, հոգեկան և զգայական բնութագրերի ձևավորման հանրամշակութային բարդ գործընթաց, ամենաանմիջական ձևով կապված է կանանց և տղամարդկանց հուզականության հետ:

Հետազոտության արդիականությունը և կարևորությունը պայմանավորված են այն հանգամանքով, որ հատկապես վերջին տարիներին գենդեր եզրույթը ակտիվորեն շրջանառվում է ընդհանրապես, Հայաստանի Հանրապետությունում՝ մասնավորապես, քանի որ գենդերային փոխհարաբերությունների համաչափ զարգացումը լիակատար կերպով համահունչ է ընդհանուր ժողովրդավարացման գործընթացին: Քաղաքական և սոցիալ-տնտեսական բնույթի համընդգրկուն տեղաշարժերի հետևանքով, շոշափելիորեն խորանում է գենդերային փոխհարաբերությունների անհամաչափությունը հասարակական կյանքում, որն էլ իր դրսևորումն է գտնում քաղաքական, իրավական, հոգեբանական, տնտեսական, սոցիալական, մշակութային, լեզվական և այլ ոլորտներում:

Հետազոտության առարկայի առանձնահատկությունը, նպատակների ու խնդիրների համալիր բնույթը պահանջում են կիրառել տարատեսակ մեթոդներ: Լեզվական նյութի վերլուծության և արդյունքների ներկայացման համար հիմնականում կիրառվել են *հանրամշակութաբանության, հանրալեզվաբանության, վիճակագրական մշակման, ինչպես նաև նկարագրական և զուգադրական վերլուծության մեթոդները*:

Արտալեզվական իրականությունների լեզվական ներկայացման ձևը մեծ մասամբ որոշվում է հաղորդակցվողի սոցիալ-հոգեբանական բնու-

թագրով: Կախված սեռից, տարիքից, կրթական մակարդակից, սոցիալական կարգավիճակից, մշակութային համապատկերից, հաղորդակցվողին շրջապատող հասարակական, գաղափարական միջավայրից՝ որոշվում է առարկայական աշխարհի լեզվական կադապարման ձևը: Այդպիսով, ակնհայտ է, որ մեր հետազոտությունը կարող է օգնել հասկանալու հաղորդակցվողների կողմից աշխարհի հուզական ընկալման տարբերությունները և դրա արտացոլումն անզլիական երգիծական խոսույթում՝ կախված գենդերային պատկանելությունից:

Գենդերային խոսքային առանձնահատկությունները ուսումնասիրելիս նաև պետք է հաշվի առնել լեզվական միջոցների գիտակցված կամ չգիտակցված կիրառման կարևորագույն խնդիրը: Եվ եթե ելնենք այն ընդունված համոզմունքից, որ աշխարհի գաղափարագեղարվեստական ընկալումը գիտակցական գործընթաց է, ապա որոշիչ դեր պետք է տալ գիտակցված տարրերին: Ինչ վերաբերում է ոչ գիտակցված տարրերին, ապա դրանք խոսքում հանդես են գալիս որպես խոսողի կամ գրողի պոռթկում, աստիճանաբար ձևեր են բերում համապատասխան նշանակություն և գիտակցվում են խոսողի կամ գրողի կողմից: Լեզվական միջոցները, որոնք տղամարդիկ և կանայք օգտագործում են գիտակցված և ոչ գիտակցված, բացահայտում են ոչ միայն նրանց հոգեբանական կերպարը, այլև նրանց աշխարհընկալումը, գեղագիտական հայացքները, պատկերավոր մտածողությունը: Տղամարդիկ և կանայք ընտրում են լեզվական միջոցները նաև ելնելով իրենց գրույցի բովանդակությունից: Ընդհանուր առմամբ նկարագրման և փոխաբերականացման ժամանակ կանայք դիմում են այն իմաստային դաշտերին, որոնք կապված են կենցաղի, բնության, կենդանիների հետ, իսկ տղամարդիկ՝ սպորտի, որսորդության, մասնագիտական և ռազմական ոլորտների հետ:

Բառային և ձևաբանական միջոցների դրսևորումը տղամարդկանց և կանանց հուզագագացական խոսքում

Տղամարդկանց և կանանց բառագործածության մեջ գոյություն ունեն տարբերություններ: Մարդու գնահատողական գործունեությունը, որն անմիջականորեն շոշափում է նրա հետաքրքրությունները, պահանջմունքները, դիրքորոշումը, սերտորեն կապված է նրա հուզական ոլորտի հետ: Ցանկացած հուզավիճակ պայմանավորված է ընկալվող իրականության նկատմամբ մարդու վերաբերմունքով և իր ու իր գործունեության համար այդ իրականության նշանակության գնահատմամբ: Դրական հույզեր առաջանում են այն դեպքում, երբ տեղի է ունենում պահանջմունքի բավարարում, հաստատվում է հավասարակշռություն սուբյեկտիվի և օբյեկտիվի միջև, իսկ իրադարձությունը, առարկան գնահատվում են որպես դրական: Բացասական հուզավիճակ առաջանում է այն պահին, երբ մարդը գիտակցում է տվյալ պահին իր անհամապատասխանությունը, կամ երբ շրջապատող իրականության երևույթը գնահատվում է որպես բացասական: Հուզավիճակին

համապատասխանում են վարքի ընդհանուր համակարգին բնորոշ փոփոխությունները, որոնք արտահայտվում են որոշակի ֆիզիոլոգիական, ինչպես նաև խոսողի լեզվական վարքի համակարգի փոփոխություններով:

Հուզական գնահատականը ուղղված է խոսակցի հուզավիճակը փոխելուն և համապատասխան արձագանք առաջացնելուն, իսկ բանականը ուղղված է արտահայտված կարծիքին համաձայնելուն կամ դրանից հրաժարվելուն (Фомина, 1996): Գնահատականի նպատակահարմարությունը մեծանում է եթե դրանից բխող կարծիքները միանում են, իսկ հուզականությունը սաստկանում է բառապաշարի արտահայտչականության ու գերզգայունության շնորհիվ:

Մեր լեզվական նյութի վերլուծությունը ցույց է տալիս, որ անգլիական անեկդոտներում գնահատողական տեղեկատվության կրողը մեծ մասամբ *գնահատողական ածականն է*, որը կատարում է հատկանշման գործառույթ: Կանանց և տղամարդկանց կողմից լեզվական միավորների կիրառման ամենավառ տարբերությունները նկատվում են ածականների բառաքերականական կարգին պատկանող միավորներ օգտագործելիս:

Անգլիական կենցաղային անեկդոտներում առավել հաճախակի գործածությամբ բնութագրվում են *ածական-որոշիչները*, որոնք հիմնականում գործառվում են երկխոսություններում: Ածական-որոշիչների մեջ իմաստաբանորեն առանձնանում են գնահատողական ածականները: Ընդ որում՝ տղամարդիկ ավելի շատ են կիրառում *հարաբերական ածականներ*, իսկ կանայք՝ *որակական*: Հուզագնահատողական ածականները (*good, bad, lovely, glad, happy* և այլն) բառերի ամենատարածված խումբն են երկխոսություններում: Կանանց խոսքը այսքի է ընկնում հուզագնահատողական բառապաշարով, իսկ տղամարդկանց գնահատողական բառապաշարը հաճախ ոճական առումով չեզոք է: Գիտակցության գնահատողական կարողությունը գործաբանական գործունեություն է. այն կապված է բազմաթիվ արտալեզվական գործոնների՝ ազգային-մշակութային կարծրատիպերի, հասարակության քաղաքական և տնտեսական իրավիճակի, այս կամ այն սոցիալական խավի, այս կամ այն մասնագիտական գործունեության, տարիքային խմբի պատկանելության հետ: Այսպիսով, գնահատականը սերտորեն կապված է խոսող սուբյեկտի հետ, հետևաբար այն ո՛չ միայն կառուցվածքային-իմաստային և գործաբանական, այլև գենդերային առանձնահատկություն ունի:

Մեր հետազոտության նպատակից ելնելով՝ դիմենք գենդերային-պիտակավորված գնահատականներին: Անգլիական կենցաղային անեկդոտներում գործածվող *պիտակավորող-գնահատողական* ամբողջ բառապաշարից ընտրվել են միայն այն *ածականները*, որոնք դրսևորվում են հաղորդակցմանը մասնակից անհատի խոսքում՝ ուղղված լինելով

տղամարդուն կամ կնոջը, և բնութագրում են նրանց ինչպես դրական, այնպես էլ բացասական լույսի ներքո:

Անգլիական անեկդոտներում կանանց և տղամարդկանց վերաբերյալ գործածվում են տարբեր բառեր՝ հատկապես նկարագրական և գնահատողական: Երբ խոսում են կնոջ մասին, նրան անվանում են *foolish, silly, stupid, ugly, slutty, gorgeous, beautiful, attractive, charming, slender, slim, awkward, capricious, coquette, talkative* և այլն:

Օրինակ՝

*The man approached the very beautiful woman in the large supermarket and asked,*

*-You know, I've lost my wife here in the supermarket.*

*Can you talk to me for a couple of minutes?*

*-Why? -Because every time I talk to a beautiful woman my wife appears out of nowhere. (Sharpe, 2004, pp. 280-281)*

Վերլուծելով վերոբերյալ օրինակը՝ կարելի է պնդել, որ ասականների իրական բովանդակությունը ձևավորվում է ոչ միայն հիմնանշանակության և բուն լեզվական նշանակության իմաստային հատկանիշներից, այլև ներառում է պիտակավորող-գնահատողական հատկանիշը:

Անկասկած, գնահատականը չի կարող դիտարկվել առանց հույզերի հետ դրա կապի: Խոսողի զգացմունքները մարդկանց, իրերի և իրադարձությունների նկատմամբ ցույց են տալիս, թե ինչպես է նա դրանք գնահատում: Հուզական գնահատականը ինքնին մարդկային է, կարող է վերաբերել տղամարդուն կամ կնոջը և այն ամենին, ինչը որևէ կերպ կապված է նրանց հետ, առնչվում է նրանց ֆիզիկական, հոգեկան և սոցիալական էությանը: Այլ կերպ գնահատվում է այն, ինչն անհրաժեշտ է մարդուն:

Լեզվական նյութի վերլուծությունը ցույց է տալիս, որ տղամարդիկ կանանց գնահատում են նաև բացասական դիտանկյունից: Օրինակ՝

*Q: How does an archeologist tell a male skeleton from a female skeleton?*

*A: He knows it's a female skeleton if the jawbone is worn down. <<http://www.ajokeaday.com/Clasificacion.asp?ID=54&Pagina=5>>*

*A boy asks his dad, "What's the difference between potential and realistic?" The dad tells him to go ask the rest of his family if they'd sleep with Brad Pitt for a million dollars, and then he'd tell him the answer. The boy goes up to his mom and asks*

*her. She responds, "A million dollars is a lot of money sweetheart. I could send you, your sister, and your brother to great colleges, so sure, I would!" He then goes and asks his sister to which she replies, "Brad Pitt? Hell ya, he's the hottest guy ever!" Next, the boy asks his brother who replies, "A million dollars? Hell yes I would. I'd be rich!" When the boy excitedly returns to his dad with the family's responses, the dad says, "Well son, potentially, we have three million dollars. Realistically, we have two sluts and a queer." <<http://www.laughfactory.com/jokes/sexist-jokes>>*

Վերը բերված օրինակներից կարող ենք նաև եզրակացնել որ, տղամարդկանց խոսքում գերակշռում են ռացիոնալիստական, սոցիալական գնահատականները, մինչդեռ հուզական և զգայական գնահատականները քիչ են: Ըստ մեր հետազոտության արդյունքների՝ անգլիական կենցաղային անեկդոտներում տղամարդը կնոջը առաջին հերթին գնահատում է արտաքինով: Իսկ երբ խոսում են տղամարդու մասին, նրան անվանում են *strong-willed, proud, villain, courageous, firm, bold, arrogant, boastful, broad-shouldered, self-confident, handsome, boring, lazy, drunken, fat, cheap, coward* և այլն: Օրինակ՝

*Three guys talk in a bar. Two discuss how they are king in their castles and how much their wives respect them. The third guy remains quiet.*

*Finally, one guy turns to the quiet guy and asks, "What about you? do you rule your roost?"*

*The quiet guy says, "Well, just the other night, my wife came to me on her hands and knees."*

*"What happened then?" they ask.*

*"She said, "Get out from under the bed and fight like a man, you coward." <http://bancuriromanesti.ro/english-jokes/english-marriage-jokes/english-marriage-jokes-9.html>*

Այս տարբերությունները անառարկելի չեն, կնոջը կարող են անվանել նաև *conceited, imperious*, իսկ տղամարդուն՝ *sweet, silly, foolish*, սակայն որպես բնութագրական ածականներ անգլիական երգիծական խոսույթում դրանք հանդիպում են հազվադեպ, սովորաբար այն դեպքում, երբ տղամարդուն ուզում են վերագրել կնոջ հատկանիշներ, իսկ կնոջը՝ տղամարդու:

Տղամարդուն և կնոջը մեծ մասամբ (բացառությամբ ածականների, որոնք գենդերային առումով չեզոք են, ինչպիսիք են *gay, kind, remarkable, honest* և այլն) գնահատում և նկարագրում են տարբեր բառերով:

Տղամարդիկ իրենց գնահատականներում առավելությունը տալիս են իրենց սեռի ներկայացուցիչներին՝ նշելով ուժը, օրինավորությունը, համարձակությունը, մեծահոգությունը և ազնվությունը: Անգլիական կենցաղային անեկդոտներում տղամարդկանց մեջ բացասական արձագանք են առաջացնում տղամարդկանց անմտությունը, հիմարությունը, դավաճանությունը, թեև վերջին երկու հատկանիշները կարծրատիպային պատկերացման հետևանքով վերագրվել են կանանց: Օրինակ՝

*A blonde guy gets home early from work and hears strange noises coming from the bedroom. He rushes upstairs to find his wife naked on the bed, sweating and panting.*

*“What’s going on?” he says.*

*“I’m having a heart attack,” cries the woman. He rushes downstairs to grab the phone, but just as he’s dialing, his 4-year old son comes up and says, “Daddy! Daddy! Uncle Ted’s hiding in your clothes closet and he’s got no clothes on!” The guy slams the phone down and storms upstairs into the bedroom, past his screaming wife, and rips open the wardrobe door. Sure enough, there is his brother, totally naked, cowering on the wardrobe floor.*

*“You IDIOT!!!” says the husband, “my wife’s having a heart attack and you’re running around naked and scaring the kids!” (Sharpe, 2004, pp. 382-383)*

Անգլիական երգիծական խոսույթում կանանց գնահատելիս արական սեռի անձանց կողմից նրանց տված դրական բնութագրումներն ավելի քիչ են, քան բացասականները: Նրանց՝ կանանց կարծրատիպային պատկերացումը դրական առումով ավելի խղճուկ է, քան՝ բացասական:

Անգլիական կենցաղային անեկդոտներում հուզագնահատողական բառապաշարի նկատելիորեն մեծ խտություն է դրսևորում կնոջ խոսքը հասցեագրված տղամարդկանց, հաճախ շեշտելով նրա բացասական հատկությունները, ինչպիսիք են՝ անխոհեմությունը, ստորությունը, անազնվությունը, դաժանությունը, էսասիրությունը, սանձարձակությունը, անբարոյականությունը: Օրինակ՝

*On the death of her husband, Eva placed a notice in the local newspaper.*

*“Robert Percy, aged 62, died of VD on June 7, at 3pm.”*

*The next day, she met her friend in the street and her friend asked her, somewhat puzzled,*

*“But Eva, I thought you told me he died of a bowel complaint?”*

*“He did,” she replied, “but I’d prefer people to remember him as a great lover rather than the little shit he really was.” (Sharpe, 2004, p. 172)*

*The undertakers were having a very difficult time. They couldn’t get the coffin lid down on old Arthur because he’d died with a full erection. Eventually, they had to ring his wife and on hearing the problem, she told them to cut it off and stick it up his backside.*

*On the day of the funeral, Arthur’s wife took one more look at her dead husband before he was taken away and she noticed a pained expression on his face. She whispered, “That’ll teach you, you old sod, you should have believed me when I said it hurt.” (Sharpe, 2004, pp. 380-381)*

Վերոբերյալ անեկդոտներում կանայք բառերը (...but I’d prefer people to remember him as a great lover rather than the little shit he really was; that’ll teach you, you old sod, you should have believed me when I said it hurt.) կիրառում են իրենց զգացմունքներն արտահայտելու, փոխըմբռնում ձեռք բերելու նպատակով:

Հետաքրքիր է նաև, որ կանանց խոսքում հանդիպում են համեմատություններ, որտեղ համեմատվող առարկաներն ու գործող անձիք հակադրվում են ծաղիկների հետ, օրինակ՝ *the flower beamed like the sun; the rose was as red as blood; the tulip shone like a lamp in darkness; the tulip was as red as ruby; cheeks are red like a rose; as senseless as lillian; passionate love is like a rose*: Այս համեմատությունների օգնությամբ կանայք նկարագրում են բնության հարստությունը և արտահայտում իրենց անհատական պատկերացումը և գնահատականը գեղեցկության վերաբերյալ:

Կանայք հակված են գործածելու դրական գնահատական արտահայտող ածականներ՝ դրա հետ մեկտեղ օգտագործելով համազնահատող *good* ածականի արտահայտչական հոմանիշները: Բացի այդ, կանայք իրենց խոսքում գործածում են իմաստը շեշտող բազմաթիվ ածականներ, օրինակ՝ *terrific, marvelous, splendid, wonderful, divine, perfect, fantastic, unbelievable, incredible, excellent* և այլն: Դրան զուգահեռ, կանայք իրենց խոսքում կիրառում են իմաստը լրացնող զանազան բառեր, ինչպես՝ *well, you know, you see, kind of, it seems, it sounds* և այլն:

Անզլիական կենցաղային անեկդոտներում, որպես տղամարդկանց հասցեագրված դրական գնահատականներ, գերակշռում են հետևյալ ածականները՝ *good-looking, charming, well-built, accommodating*: Օրինակ՝



*One Friday afternoon, two secretaries were hanging around the water cooler at the office. “Veronica, I just don’t know what to do,” Gloria said to her friend at work. “That good-looking Alex in accounting asked me out on a date for Saturday night. Should I go?” “Oh, my God!” her friend exclaimed. “He’ll wine you, dine you, and then use any ruse to get you up to his apartment. Then he’ll rip off your dress”. “What should I do?” asked Gloria. Her friend quickly replied, “Wear an old dress” (Sharpe, 2004, p. 342)*

Ի տարբերություն տղամարդկանց՝ կանայք իզական սեռի ներկայացուցիչներին գնահատելիս առաջին հերթին դրականորեն առանձնացնում են նրանց խելքը, կրթվածությունը, հոգեկան հասկություններից գնահատվում են նվիրվածությունը, ազնվությունը և անկեղծությունը: Կինը բացասական գնահատականի դեպքում ավելի շատ օգտագործում է կնոջը հասցեագրված հետևյալ մակդիրները՝ *stupid, evil, common tart, cruel, dirty cocotte, a promiscuous woman, unfeeling, insidious, vile and sordid, scandalous* և այլն: Օրինակ՝

*The angry woman marched round to her next door neighbour’s house and confronted her with a set of photographs.*

*“Look at these, you common tart, this is proof that you’ve been seeing my husband. There’s one of the two of you in bed, this is a picture of you and him in the back seat of the car and this one shows you sitting on his knee. What do you have to say for yourself?” she snarled.*

*For a few moments, the next-door neighbour looked through the photographs and then said, “Mmm, not bad. I’ll have two copies of the first picture and one each of the other two.” (Sharpe, 2004, p. 326)*

Բերված օրինակից պարզ է դառնում, որ կանանց խոսքը բավականին երկար է (*Look at these, you common tart, this is proof that you’ve been seeing my husband. There’s one of the two of you in bed, this is a picture of you and him in the back seat of the car and this one shows you sitting on his knee. What do you have to say for yourself?*): Հաղորդակցության այս մարտավարությունը տարածված երևույթ է, որի շնորհիվ պահպանվում է կանանց խոսքի շարունակականությունը:

Առանձնակի հիշատակման է արժանի կանանց ինքնահեգնանքի դրսևորումը անգլիական երգիծական խոսույթում: Նշյալ հնարանքը թույլ է տալիս արտահայտել խոսողի վերաբերմունքը սյուժեի նկարագրությանը և խոսողի դերը դրանում ինքն իրեն ծաղրելու միջոցով: Ինքն իր

վրա ծիծաղելու ունակությունը ավելի բնորոշ է կանանց, և դա յուրօրինակ պաշտպանական ռեակցիա է: Ըստ երևույթին, տղամարդու համար ավելի դժվար է ծիծաղել ինքն իր վրա: Հնարավոր է՝ դա պայմանավորված է առաջինը լինելու կամ դրան ձգտելու գենդերային դերով, իսկ «գլխավոր» դերում հանդես եկող մարդը չի կարող լինել ծիծաղի առարկա, այսինքն՝ նա, ում քննադատում կամ դատապարտում են:

Այսպիսով՝ վերլուծելով պիտակավորող-գնահատողական բառապաշարի կիրառումը՝ որպես հուզարտահայտչական միջոցներից մեկը, որը լեզվական անհատը գործածում է անգլիական կենցաղային անեկդոտներում, կարող ենք եզրակացնել, որ անգլիացի տղամարդիկ իրենց խոսքում ավելի շատ *պիտակավորող-գնահատողական բառեր* են օգտագործում, քան կանայք, ընդ որում՝ բացասական նրբիմաստների թիվը զգալիորեն մեծ է դրական պիտակավորող գնահատականներից: Մեր կարծիքով, դա բացատրվում է նրանով, որ երբ մարդը բացասական հույզեր է ունենում, նրա ապրումներն ավելի խորքային բնույթ են կրում, ուստի բացասական գնահատականը միշտ քանակապես և որակապես ավելի հարուստ է՝ հաճախ կոպիտ բառապաշարի ներգրավմամբ:

Հարկ է նշել նաև, որ կնոջ խոսքում հուզագնահատողական *կոչական բառերի* քանակն զգալիորեն մեծ է: Կանանց կողմից գործածվող դիմելաձևերը որակական առումով աչքի են ընկնում մեծ բազմազանությամբ՝ *sweetheart, honey, darling, silly, little thing, pompous old ass, sweetie pie, old cow, poor lamb, poor baby, silly little fool, old donkey* և այլն: Հասցեագրման համանման միջոցներ կանանց կողմից կիրառվում են թե՛ տղամարդկանց, թե՛ կանանց դիմելիս, եթե հաղորդակցությունը կատարվում է կենցաղային մակարդակում: Դիտարկենք օրինակներ:

*A Rich old man, who inherited all his money from his father, one day asks his young wife:*

*“Honey, would you still have married me if my father didn’t leave me with all this money?”*

*His wife smiles gently and answers: “Sure honey, you know I would marry you no matter who gave you the money”*

*<<http://www.hiren.info/funstuff/funny-jokes/if-i-wasnt-rich>>*

*The Reverend James and his newly married wife retire to the honeymoon suite, where she gets ready for bed and he disappears into the bathroom. A few minutes later he comes out to find his wife is already under the covers.*

*“Doris, I thought I’d find you on your knees,” he said. (Sharpe, 2004, p. 324)*

Տղամարդկանց խոսքին բնորոշ դիմելաձևերն այնքան էլ բազմազան չեն: Վերջիններս կնոջ հետ խոսելիս բավարարվում են հետևյալ տարբերակներով՝ *dear, darling, dearest, honey*:

*One night at the dinner table, the wife commented, “When we were first married, you took the small piece of steak and gave me the larger. Now you take the large one and leave me the smaller; You don’t love me any more...”*

*“Nonsense, darling,” replied the husband, “you just cook better now.” (Sharpe, 2004, p. 115)*

*A very elderly couple is having an elegant dinner to celebrate their 75th wedding anniversary. The old man leans forward and says softly to his wife, “Dear, there is something that I must ask you. It has always bothered me that our tenth child never quite looked like the rest of our children. Now I want to assure you that these 75 years have been the most wonderful experience I could have ever hoped for, and your answer cannot take that all away. But, I must know, did he have a different father?”*

*The wife drops her head, unable to look her husband in the eye, she paused for a moment and then confessed. “Yes. Yes he did.”*

*The old man is very shaken, the reality of what his wife was admitting hit him harder than he had expected. With a tear in his eye he asks, “Who? Who was he? Who was the father?” Again, the old woman drops her head, saying nothing at first as she tried to muster the courage to tell the truth to her husband. Then, finally, she says: “You.” (Sharpe, 2004, p. 352)*

Սակայն եթե շփումը տեղի է ունենում բավականին մտերմիկ հարաբերություններ ունեցող տղամարդու և կնոջ միջև, ապա տղամարդկանց կողմից դիմելու ձևերն ավելի բազմազան են դառնում՝ *my dear girl, my little girl, lassie, sweetie, duckie, bugabear, honeybun, honeysweet* և այլն: Իսկ կանանց խոսքում հանդիպում ենք բառեր փաղաքշական ածանցներով օրինակ՝ *dearie, doggie, kitty, horsie, sweetie, babykins, chuckie, islet, lambkin, boykin, spherule, animacule, kitcnette, balconette, hillock, paddock, bullock, catling, manling, firstling* և այլն: Կանանց հաստուկ է նաև *փոքրացուցիչ-փաղաքշական բառերի* կիրառումը: Նման բառերը բնորոշ են երեխաների (հատկապես փոքր տարիքի) հետ մեծերի զրույցներին, սակայն կանանց խոսքում նշյալ հատկությունը բավականին վառ է արտահայտվում: Փոքրացուցիչ-փաղաքշական բառերը կանանց խոսքում հիմնավորապես հաստատվում են դեռ մանկության շրջանից. աղջիկ-մայրիկ խաղի ընթացքում, մանուկների, ընտանի կենդանիների

հետ շփումների ժամանակ և այլն: Ակնհայտորեն այս երևույթը արտացոլում է արտահայտչամիջոցներն ընդլայնելու կանանց պահանջմունքը՝ քնքշանքի, փաղաքշանքի տարբեր նրբերանգներ փոխանցելու, հուզագնահատողական հատկանիշի արտահայտման աստիճանը մեծացնելու, առարկայի բնութագրական առանձնահատկությունները շեշտելու, ինչպես նաև սեփական վերաբերմունքը դրա նկատմամբ արտահայտելու համար: Կանանց խոսքում հանդիպող փոքրացուցիչ-փաղաքշական միավորները մեծ մասամբ որպես բառակազմական ձևային ունենում են հետևյալ ածանցները *ock; en; sie/-sies/-sy; ling; kin; cule* և այլն: Կանայք հաճախ օգտագործում են փոքրացուցիչ-փաղաքշական բառեր:

Եթե խոսենք բառային կազմի, իմաստաբանական դաշտերի և գուգորդական շարքերի մասին, ապա ելնելով այն բանից, որ կինը կենտրոնացած է իր ներաշխարհի վրա, նրա խոսքի բառային կազմում ավելի շատ են զգացմունքներ, հույզեր արտահայտող բառերը, նա ավելի հաճախ է կիրառում մարդու հուզական-հոգեբանական վիճակը բնութագրող արտահայտություններ: Այս հանգամանքով է նաև պայմանավորված կանանց խոսքում փոխաբերությունների առատությունը: Իր ծավալով «կնոջ» բառապաշարը հարաբերականորեն փոքր է: Կանայք օգտագործում են բառարանի հիմնական բառապաշարը, այսինքն՝ խոսքում ավելի հաճախ հանդիպող բառային միավորները, մինչդեռ տղամարդիկ ավելի շատ են գործածում *նորաբանություններ*՝ ի գորու չլինելով գտնել դրանց փոխարինող ավելի գործածական բառերն ու արտահայտությունները:

Անգլիական երգիծական խոսույթում տղամարդիկ ավելի ընկալունակ են լեզվական նոր փաստերի նկատմամբ, քան կանայք: Նրանք գործածում են ավելի շատ նորաբանություններ (օրինակ՝ *megadual (totally awesome)*, *pot-head (someone who smokes marijuana habitually)*, *get wrecked (something to threaten someone with or to say after you wreck someone)*, *telebanking (telephone banking, Internet banking)*, *dial-a-taxi dial-a-meal (order transport, meal)*, *get stoned (to become very drunk or high on some drug)*, *teleport (transport by dematerializing at one point and assembling at another)*, *dude (an informal form of address for a man; a man who is much concerned with his dress and appearance)*, *kidvid (television for children)*; *jive (n. deceive statements or beliefs that are untrue or make no sense; v. talk misleadingly or insincerely)*, *acid-head (someone who takes LSD)* և այլն), ինչպես նաև բառեր տերմինաբանական և մասնագիտական բառապաշարից (*interlingual (a written communication in a second language having the same meaning as the written communication in a first language)*, *homophobia (prejudice against fear or dislike of homosexual people and homosexuality)*, *telemetry systems (for treating patients at a distance; they are remote phone based systems that are placed in the home of the patient)*,

*biometric eye-scanner (is device that scans certain physical characteristics and allows entry into computers) և այլն): Օրինակ՝*

*A naive young man found himself in the wrong part of town late at night, and got attacked by a gang of muggers. He put up a terrific fight but was eventually overcome and lay bleeding on the ground. When the muggers went through his pockets, all they found was a handful of loose change.*

*“You are just jiving me, man. You went through all that just to protect a few coins?” they asked amazed.*

*“Oh I see,” said the man. “For a while I thought you were after the \$500 hidden in my shoe.” (Sharpe, 2004, p. 43)*

Բերված օրինակներում “*You are just jiving me, man*” արտահայտության մեջ օգտագործվել է տղամարդու կողմից *jive* նորաբանությունը, որը կատարում է հաղորդակցային և առնչանակային գործառույթներ: Ինչպես ցույց է տալիս երգիծական խոսույթի վերլուծությունը, տղամարդկանց խոսքում նրանց օգտագործած նորաբանությունների «զինանոցը» բավականին բազմազան է:

Ուսումնասիրության են ենթարկվել տղամարդկանց և կանանց հուզավիճակներն արտահայտող բազմաթիվ *ուժգնացնող բառեր*. Գենդերային առումով դրանք գերակշռում են կանանց խոսքում: Կանանց խոսքին հատուկ ոճական բնութագրերից է զգացմունքների չափազանցման միտումը: Դա դրսևորվում է *incredible, crazy, creepy, terrible* ուժգնացնող բառերի լայն գործածությամբ: Բառօգտագործման այդ առանձնահատկությունը հատկապես նկատելի է գնահատողական դատողություններ անելիս: Այն հստակ երևում է նաև կանանց բնորոշ կարծրատիպային երկխոսության արձագանքներում: Արտահայտչականության ծայրահեղ ձևերի դիմելը կանանց խոսքի բնորոշ գծերից է: Ուժգնացնող բառերը հնարավորություն են տալիս հույզերին դուրս գալու առաջին պլան: Առանց հուզական լիցքերին ուժգնություն հաղորդող լեզվական միավորների (եղանակավորող բառերի, մասնիկների և այլնի)՝ կնվազեցնում խոսակցական լեզվի հուզականությունն ու անկաշկանդությունը: Հույզերը ստվերում են իմաստային նրբերանգները. որքան բարձր է դրսևորման ուժգնությունը, այնքան անորոշ է դրա տրամաբանական իմաստը:

Անզվիական կենցաղային անեկդոտներում, առավել հաճախ կանանց խոսքում, գործածվում են ուժգնացնող ածականներ՝ *admirable, colossal, enormous, senseless, beautiful, considerable, terrific, all-important, extraordinary, dearest, earnest, fondest, heaviest, highest, hopeless, fantastic, catastrophic, exclusive, hilarious, fabulous, furious, rough, wonderful, monstrous, boundless, extraordinary, extreme* և այլն: Օրինակ՝

*A woman meets with her lover, who is also her husband's best friend.*

*They make love for hours. Afterwards, as they lie in bed, the phone rings. Since it's the woman's house, she picks up the receiver. The best friend listens, only hearing her side of the conversation:*

*"Hello? Oh, hi... I'm so glad that you called... Really? That's wonderful... Well, I'm happy to hear you're having such a great time... Oh, that sounds terrific... Love you, too. OK. Bye-bye."*

*She hangs up the telephone and her lover asks, "Who was that?"*

*"Oh," she replies, "That was my husband telling me about the wonderful time he's having on his fishing trip with you."*

*<http://jokes.cc.com/funny-marriage-jokes/7ra4ct/the-husband-s-best-friend>*

*One day in the Garden of Eden,  
Eve calls out to God...*

*"Lord, I have a problem!"*

*"What's the problem, Eve?"*

*"Lord, I know you've created me and have provided this beautiful garden and all of these wonderful animals, and that hilarious comedic snake, but I'm just not happy."*

*"Why is that, Eve?" came the reply from above.*

*"Lord, I am lonely. And I'm sick to death of apples."*

*"Well, Eve, in that case, I have a solution. I shall create a man for you."*

*"What's a 'man', Lord? "This man will be a flawed creature, with aggressive tendencies, an enormous ego and an inability to empathise or listen to you properly. All in all, he'll give you a hard time. But, he'll be bigger, faster and more muscular than you. He'll also need your advice to think properly. He'll be really good at fighting and kicking a ball about, hunting fleet-footed ruminants, and not altogether bad in the sack."*

*"Sounds great," says Eve, with an ironically raised eyebrow.*

*"Yeah, well... He's better than a poke in the eye with a burnt stick. But, you can have him on one condition."*

*"What's that, Lord?"*

*"You'll have to let him believe that I made him first."*

*(Sharpe, 2004, p. 82)*

Առավել գործածական են *great, so, so much/many, pretty, really, too, too much/many, quite* ուժգնացնող բառերը: Նախադասության հուզարտահայտչական ձևավորումը կախված է հուզավիճակի աստիճանից ու լարվածությունից: Նախադասության մեջ մեկից ավելի ուժգնացնող բառերի առկայությունը վկայում է մարդու հուզավիճակի, ապրումների խորության մասին: Կանայք տղամարդկանցից առավել հաճախ են գործածում *“so”* և *“such”* մասնիկները՝ իրենց հուզագնահատողական արտահայտությունները ուժգնացնելու նպատակով: Ինչպես արդեն վերը նշել ենք, կինը ավելի շատ է կենտրոնացած իր ներաշխարհի վրա, քան տղամարդը, որով էլ պայմանավորված է նրա կողմից ավելի շատ զգացմունքներ, հույզեր արտահայտող բառերի, մասնիկների, մարդու հուզական-հոգեբանական վիճակն արտահայտող բառակապակցությունների օգտագործումը: *Զայրույթի* և *ուրախության* մեր դիտարկած հուզավիճակներում երկու սեռի ներկայացուցիչներն էլ օգտագործում են մեծ թվով ուժգնացնող բառեր: Ուժգնացնող բառերն օգնում են խոսողին արտահայտելու ոչ միայն մտքերի ու զգացմունքների նրբերանգները, այլև կառուցելու խոսքը, լրացնելու դադարները, որոնք անհրաժեշտ են ճիշտ բառը գտնելու համար: Բացի այդ, անգլիական երգիծական խոսույթում ուժգնացնող բառերը այլ բառերի, ինչպես նաև ամբողջ արտահայտության նշանակությունների մեջ ներառում են լրացուցիչ իմաստային նրբերանգներ՝ առանձնացնելով, սահմանափակելով կամ ուժեղացնելով դրանք:

Եթե անգլիական երգիծական խոսույթում դիտարկենք կանանց և տղամարդկանց խոսքի ձևաբանական կողմը, ապա կարելի է նկատել շատ ուշագրավ առանձնահատկություններ: Լեզվական նյութի վերլուծությամբ պարզվում է, որ անգլիական երգիծական խոսույթում տղամարդիկ ավելի շատ են օգտագործում *բայեր*, իսկ կանայք՝ *ածականներ* և *մակբայներ*: Ստորև ներկայացվող կենցաղային անեկդոտի օրինակում կանայք իրենց հույզերը հաղորդում են *wonderful, romantic, awful* ածականների օգնությամբ (*The honeymoon was so wonderful. So romantic...; What could be so awful?*): Նմանօրինակ ածականները կանանց խոսքում արտահայտում են պասիվ հուզավիճակներ, այլ ոչ թե ակտիվ հույզեր: Օրինակ՝

*Rupert and Elaine, young couple, got married and went happily on their honeymoon.*

*When they got back, Elaine immediately “phoned her mother and her mother obviously asked, “How was the honeymoon, dearest?”*

*“Oh, Ma,” she replied, “the honeymoon was so wonderful. So romantic...”*

*Then Elaine burst out crying. "But, Ma, as soon as we returned home Rupert started using the most ghastly language... saying things I've never heard before! I mean, all these awful 4-letter words! You've got to come get me and take me home.... Please Ma."*

*"Calm down, Elaine!," said her mother, "Tell me, what could be so awful? What 4-letter words?"*

*Still sobbing, Elaine whispered, "Oh, Ma... words like dust, wash, cook, and iron."*

*<[http://www.guy-sports.com/jokes/good\\_jokes.htm](http://www.guy-sports.com/jokes/good_jokes.htm)>*

Ներկայացվող կենցաղային անեկդոտի օրինակում օգտագործվում է «so» մասնիկը՝ խոսողի հուզազնահատողական վիճակը ուժգնացնելու համար, որը բնորոշ է կանանց գնահատողական խոսքին: «*Awful, romantic*» ածականները «so» ուժգնացնող բառի համակցությամբ ստանում են դրական և բացասական գնահատողական իմաստ՝ արտահայտելով խոսողի հիացմունքը, ջնճությունը և զգվանքը: Մինչդեռ տղամարդկանց խոսքում նկատվում է հուզական բայերի կիրառություն, որոնք, ընդհակառակը, ենթադրում են սուբյեկտի ավելի ակտիվ դեր, օրինակ՝ *agitate, amaze, hurt, surprise, astonish* և այլն:

Կանանց և տղամարդկանց խոսքի տարբերությունների ուսումնասիրության համար բառապաշարի վերլուծությունը կարող է շատ արդյունավետ լինել: Բառապաշարի ընտրությունը, մտքի շարադրանքը շատ անհատական են: Արտահայտչամիջոցները ստեղծվում են ընդհանուր գործածական բառերի միջոցով և ծառայում են մեկ նպատակի՝ մարդու զաղափարների առավել ճշգրիտ արտահայտմանը: Անգլիական երգիծական խոսույթում մի շարք ածականներ և գոյականներ բավականին հաճախ են օգտագործվում կանանց խոսքում՝ *mountains, sun, sky, green, greenery, yellow, cool, clean, clear, white, blue, pale, glisten, glitter, gleam, brilliant, radiant, gold, golden* և այլն: Ըստ իմաստաբանական դասակարգման կարելի է առանձնացնել այս բառերի հետևյալ հասկացությունները՝

- հավիտենականություն՝ *sun, sky, mountain,*
- երիտասարդություն, կյանք՝ *green, greenery, yellow,*
- մաքրություն՝ *cool, clean, clear, white, blue, pale,*
- գեղեցկություն՝ *glisten, glitter, gleam, brilliant, radiant, gold, golden:*

Կանանց խոսքում նրանց զգացմունքներն ու ապրումները բացահայտվում են բնության լավ ծանոթ երևույթների հակադրության միջոցով: Այդպիսի համեմատությունների գլխավոր նպատակն է փոխանցել ներքին հոգեվիճակը: Մարդը և բնությունը մի ամբողջություն են, որը և



հիմք է ստեղծում հակադրելու գործունեությունը, վարքը, խառնվածքը, մարդու կապը բնության հետ: Նույնիսկ այն դեպքերում, երբ օգտագործվում են ձև, գույն, չափ հատկանշող որակական ածականներ խոսողը լրացնում է դրանք լրացուցիչ իմաստներով, և այսպես թե այնպես դա նկարագրում է մարդու հուզավիճակը: Կանայք ներկայացնում են իրենց ներաշխարհը շատ մանրակրկիտ՝ չառանձնացնելով այն հասարակական կյանքից և կոնկրետ ժամանակից:

Տղամարդկանց խոսքին ավելի բնորոշ են որոշակիությունն ու տեղեկատվայնությունը, վերլուծական դիտարկումներն ու քննադատական դիտողությունները: Եթե կանանց խոսքում քննադատությունը վերացական կամ ընդհանրական բնույթի է, ապա տղամարդկանց քննադատությունը հիմնականում որոշակի է, հասցեական և անձնավորված: Բացի այդ, պետք է նշել, որ տղամարդիկ նախընտրում են ավելի ստանդարտ ու կարճ բնութագրություններ կոնֆլիկտային իրավիճակներում բացասական հույզեր փոխանցելու համար: Կանայք հիմնականում օգտագործում են այդ միջոցները դրական հույզերը սաստկացնելու, ասվածի նկատմամբ իրենց հեզնական վերաբերմունքն արտահայտելու համար, նրանց արտահայտությունները երկար են և բառաշատ:

Ընդհանուր առմամբ, անգլիական երգիծական խոսույթում կանայք և տղամարդիկ մոտավորապես նույն հարաբերակցությամբ գործածում են անկատարի բայական ձևերը: Ընդ որում, դրանք ավելի հաճախ կիրառում են կանայք, իսկ կատարյալներ՝ տղամարդիկ, ինչը համապատասխանում է տղամարդկանց վարքագծային բնութագրերին. բայի կատարյալ ձևի գլխավոր հատկանիշը նպատակն է, արդյունքը, ամբողջականությունը: Ուսումնասիրվող անեկդոտների օրինակները ապացուցում են այն փաստը, որ տղամարդիկ օժտված են գործողությունները համեմատելու կարողությամբ: Այդպիսի համեմատություններ օգտագործելիս տղամարդկանց համար կարևոր է, թե յուր ինչպես է ըմբռնում կերպարների գործողությունները:

Երգիծական խոսույթում կանանց խոսքը աչքի է ընկնում *մակբայ + մակբայ կառույցի* հաճախակի գործածությամբ: Իրենց խոսքի քաղաքավարի բնույթից ելնելով՝ կանայք օգտագործում են այսպես կոչված երկակի մոդալականության միջոցներ (*մոդալ բայ + մակբայ*), օրինակ՝ *I was wondering if you could possibly just do me a small favour* և այլն:

Անգլիական երգիծական խոսույթում զանազան մոդալ բայերի գործածումը ևս էականորեն տարբերվում է տղամարդկանց և կանանց խոսքում: Տղամարդիկ նախընտրում են *“can, must”* բայերը, որոնք արտահայտում են ֆիզիկական կարողություն, հնարավորություն, անհրաժեշտություն, իսկ կանայք՝ *“may, should, ought to”* բայերը, որոնք ունեն գործողություն կատարելու հավանականության և բարոյական անհրաժեշտության, պարտավորության իմաստ: Հատկապես կանանց խոսքում յեզվի մոդալ միջոցների գերակայությունը կարելի է բացատրել ընդհանուր

առմամբ կանանց խոսքի անվստահությամբ, անորոշությամբ և անվճռականությամբ:

Տղամարդկանց նախադասությունները ավելի հաճախ են սկսվում “I” դերանունով (րստ մեր դիտարկումների, կանանց մոտ այդ անձնական դերանունը գործածվում է գրեթե երկու անգամ քիչ, նրանք ավելի հաճախ օգտագործում են “we” անձնական և “this”, “that”, “these”, “those” ցուցական դերանունները): Առաջին դեմքի անձնական դերանունը, մատնանշում է հենց իրեն՝ խոսողին: Նման ընտրությունը լիովին համապատասխանում է այն գերակայող կարծրատիպին, որ տղամարդը չպետք է լինի թույլ և կախյալ: Լեզվաբանական դիտարկումները համընկնում են հոգեբանների այն կանխավարկածին, որ կնոջ «ego»-ի սահմաններն ավելի քիչ են հստակեցված ու պատճառաբանված (Pervin & John, 1997):

Մարդու խոսքը այնպիսի միջոցների կարիք ունի, որոնք կկարողանան անմիջականորեն արտահայտել հույզեր, արտացոլել վերաբերմունք արտաքին աշխարհի երևույթների նկատմամբ: Խոսողի հուզավիճակն արտահայտող առավել հաճախադեպ միջոցներից են *ձայնարկությունները*, որոնց կարելի է սահմանել որպես հուզական բառապաշարի մասնիկներ: Դրանք նախադասության մեջ հարաբերականորեն օժանդակ դեր ունեն, այսինքն՝ կարելի է և յօգտագործել ձայնարկությունները առանց խաթարելու նախադասության կամ արտահայտության ընդհանուր իմաստը: Ձայնարկությունները շարահյուստը կապված չեն նախադասության այլ մասերի հետ: Բազմաթիվ հուզական բառեր, և հատկապես ձայնարկությունները, հույզեր են արտահայտում ամենաընդհանուր գծերով՝ անգամ չրնդգծելով դրա դրական կամ բացասական բնույթը: Օրինակ՝ “Oh”-ը կարող է արտահայտել և՛ ուրախություն, և՛ թախիծ, և՛ բազմաթիվ այլ հույզեր:

Անգամ մեկ ձայնարկության առկայությունը հուզականություն է հաղորդում ամբողջ արտահայտությանը: Ընդհանուր առմամբ ձայնարկությունների միջոցով հաղորդվում է արտահայտության ողջ բնեբանգր: Դրանց նշանակությունը պարունակում է ամբողջ արտահայտության հիմնական միտքը:

Ձայնարկություններն իրենց գործածության համատեքստն ունեն, որը հանդես է գալիս ձայնարկության իմաստն արտահայտող հաղորդակցային վերաբերյալի դերում: Համատեքստը ներկայացնում է հուզավիճակ, որը տարբեր միջոցներով իրական կենսական իրավիճակների արտահայտման տարբերակ է:

Ձայնարկություններ պարունակող արտահայտություններում տեղ գտած հույզերը ճիշտ մեկնաբանելու համար վճռորոշ նշանակություն ունի համատեքստը, որում արտահայտվում են սուբյեկտի վերապրած զանազան հույզերը: Ձայնարկությունները չունեն առարկայական նշանակություն, իսկ հուզական նշանակությունը կախված է խոսքային իրա-

դրությունից: Դրանք գենդերային առումով որոշարկված են: Չայնարկությունների գենդերային նշույթավորվածությունը նկատելի է ձայնարկությունների խոսույթային կիրառման և լեզվական անձի գենդերային բնութագրերի միջև: Անգլիական կենցաղային անեկդոտներում կանայք իրենց խոսքում ավելի հաճախ են գործածում ձայնարկություններ: Մասնավորապես հաճախադեպ են *alas, dear God, Good gracious, God, oh God, oh my God, hush, my word, oh, oh dear, oh my dear me, oh no, thank goodness, Oh Jesus* ձայնարկությունների կիրառությունները: Այն ձայնարկությունները, որոնց օգնությամբ դիմում են Աստծուն և հիշատակում նրա անունը, կարծրատիպային ընկալմամբ վերագրվում են կանանց և արտահայտում են *վախ, երկյուղ, սարսափ*:

Օրինակ՝

*While examining the body of Mr. Schwartz, a mortician notices that Schwartz has the largest penis he has ever seen.*

*“I’m sorry, Mr. Schwartz,” says the mortician, “But I can’t send you to be cremated with a tremendously huge penis like this. It has to be saved for posterity.”*

*The mortician removes the penis, places it in a jar and puts the jar in his briefcase. When he gets home, he decides to show it to his wife. “I have something to show you that you won’t believe,” he says, removing the jar from his briefcase.*

*“Oh my God!” she screams, “Schwartz is dead!”*

*<<http://jokes.cc.com/funny-dark-humor/d6vjuu/the-mortician-s-big-discovery>>*

Սակայն նման ձայնարկությունները (*By God; Oh God*) տարբեր իմաստներով են գործածվում. տղամարդկանց դեպքում դա առավելապես *զարմանքի, խնդրանքի, զայրույթի ու նյարդայնության* իրավիճակ է: Օրինակ՝

*The poor man was in great difficulties. His business was failing and it looked as if he was facing bankruptcy. As a last resort he popped into the local church and kneeling down he prayed fervently.*

*“Oh God, please don’t let this happen to me, please let me win the lottery. I wish I could win the lottery.”*

*But on Saturday night, he had no luck. The following week, the situation got worse. The man lost his house and all his possessions, so once again he went into church and prayed desperately.*

*“Oh please, please I beg you. I wish I could win the lottery.”*

*But on Saturday, he had no luck. On the following Monday, his wife and children left him and he was now completely on his own. He ran into church, got down on his knees and pleaded, "Oh God, everything has gone, I have nothing left. Have pity on me, I beg you. Why won't you help me win the lottery?"*

*At that moment, there was a tremendous thunderclap, a bright flashing light and God boomed out, "You daft bugger, you could at least give yourself a sporting chance and buy a fucking ticket!" (խնդրանք, գայրույթ) (Sharpe, 2004, pp. 297-298)*

Վերը բերված անեկդոտում հերոսի խոսքում նկատվում է ստորադասական եղանակի կառույց (*I wish I could win the lottery*), որը բավականին տարածված երևույթ է տղամարդկանց խոսքում:

Ինչ վերաբերում է ձայնարկությունների կիրառությանը տղամարդկանց խոսքում, ապա այստեղ ավելի հաճախ գործածվում են. *ah, aha, aw, ay, aye, bah, by God, oh damn, God damn, devil, good Lord, gosh, ha, By jove, heaven knows, hell, hey, hush, hmmm, oh hell, yeah*: Օրինակ՝

*A guy goes to see his doctor, and the doctor says, "Well, I'm afraid you have six weeks to live." The guy says, "Oh damn, well what should I do doctor?" The doctor tells him, "You should take a mud bath once a day for the next six weeks," and the guy asks, "Why? Is that supposed to help?" and the doctor says, "No, but it'll get you used to being in the ground."*  
[<http://www.jokesoftheday.net/jokes-archive/2015/01/05/>](http://www.jokesoftheday.net/jokes-archive/2015/01/05/)

Անգլիական երգիծական խոսույթում տղամարդիկ գործածում են մեծ թվով ձայնարկություններ իրենց հույզերը վերարտադրելու նպատակով: Դրանք հաճույքի, ուրախության, զարմանքի, գայրույթի, հակակրանքի և աստելության հույզերն են: Օրինակ՝

*One day Little Jonnie says to his father: "I want to get married."*  
*Father: Oh, so do you have someone special in your mind?*  
*Johnny: Yes...Grandma*  
*Father: What? There is a problem now; you want to marry my Mother?*  
*Johnny: Why not? You married my mother. (գարմանք)*  
[<http://www.ajokeaday.com/clasificacion.asp?ID=48&Pagina=10>](http://www.ajokeaday.com/clasificacion.asp?ID=48&Pagina=10)

Անգլիական կենցաղային անեկդոտներում իգական սեռի գործող անձինք օգտագործում են մեծ թվով ձայնարկություններ՝ *տխրության, վախի, հիացմունքի* և *զղջման հույզերն* արտահայտելու համար: Օրինակ՝

*Mrs. Culpepper was almost in tears. "Oh Marie," she said to her maid, "To my mind I have reason to suspect that my husband is having an affair with his secretary."*

*"You see, I don't believe it for one minute!" Marie snapped.*

*"I suppose, you're just saying that to make me jealous !!"*

*(uŋɥʁɯɲɪɔʁɲɪú) (Sharpe, 2004, p. 83)*

*A woman who died found herself standing outside the Pearly Gates, being greeted by St. Peter.*

*She asked him, "Oh, is this place what I really think it is? It's so beautiful.*

*Did I really make it to heaven?"*

*To which St. Peter replied, "Yes, my dear, these are the Gates to Heaven. But you must do one more thing before you can enter." The woman was very excited, and asked of St. Peter what she must do to pass through the gates. "Spell a word," St. Peter replied. "What word?" she asked.*

*"Any word," answered St. Peter. "It's your choice." The woman promptly replied, "Then the word I will probably spell is love.L-o-v-e."*

*St. Peter congratulated her on her good fortune to have made it to Heaven, and asked her if she would mind taking his place at the gates for a few minutes while he went to the bathroom.*

*"I'd be honored," she said, "but what should I do if someone comes while you are gone?"*

*St. Peter reassured her, and instructed the woman to simply have any newcomers to the Pearly Gates to spell a word as she had done.*

*So the woman is left sitting in St. Peter's chair and watching the beautiful angels soaring around her when a man approaches the gates. She realizes it is her loser husband.*

*"What happened?" she cried, "Why are you here?"*

*Her husband stared at her for a moment, then said, "I was so drunk when I left your funeral, I was in an accident. And now I am here? Did I really make it to Heaven?"*

*To which the woman replied, "Not yet. You see, you must spell a word first."*

*"What word?" he asked.*

*The woman responded, "Czechoslovakia." (hɥuɔʁɯɲɪúɔʁ)*

*<http://www.ajokeaday.com/Clasificacion.asp?ID=48&Pagina=>*

5

Կանանց խոսք ներկայացնող բերված հատվածներում ակնհայտ է ձայնարկությունների քանակը: Կանանց խոսքում հանդիպում են զանազան միջանկյալ բառեր և կառույցներ, որոնք արտահայտում են վստահության տարբեր աստիճաններ *to my mind, you see, I suppose, I think, probably, possibly* և այլն:

Միևնույն ձայնարկությունը տղամարդու և կնոջ խոսքում կարող է ունենալ հմաստային տարբեր դրսևորումներ: Տղամարդկանց և կանանց խոսքում *“oh”* ձայնարկությունը կիրառելիս ի հայտ են գալիս որոշակի տարբերություններ. եթե տղամարդկանց խոսքում այն արտահայտում է *զայրույթ*, ապա կանանց խոսքում՝ *զարմանք, տխրություն, ուրախություն, վախ*: Այսպես, օրինակ՝

*Mother: “Why are you home from school so early?”*

*Son: “I was the only one who could answer a question.”*

*Mother: “Oh, really? What was the question?”*

*Son: “Who threw the eraser at the principal?” (զարմանք)*

*(Sharpe, 2004, p. 95)*

*In a car in the middle of Colorado a wife says to her husband,  
“Oh Dear George, I’m afraid the house is going to burn down,  
I’m sure I left the iron on.”*

*George: “The house will not burn down Dear, don’t worry”*

*Wife: “Now how can you make a statement like that”*

*George: “Cause I forgot to turn off the water in the bathtub!”*

*(վախ) (Sharpe, 2004, p. 101)*

Որոշ ձայնարկություններ, սակայն, հաստատուն կերպով արտահայտում են որոշակի հույզեր և կրում են պայմանական բնույթ: *“Ah”* և *“oh”* ձայնարկությունները հաճախադեպ կիրառություն ունեն, թեև *“ah”* ձայնարկության կիրառման առաջնայնությունը պատկանում է արական սեռի հաղորդակցվողներին, իսկ *“oh”* ձայնարկությունը՝ իգական սեռի:

Նախադասություններում հույզերի ուժեղ նշույթավորվածություն ձեռք է բերվում հուզարտահայտչական ներդրյալ կառույցների միջոցով (տվյալ դեպքում՝ *ձայնարկությունների*): Նման հուզարտահայտչական նշանները, որոնք տեղաբաշխված են խոսքի սկզբում, մեջտեղում և վերջում, օժտված են ուշադրությունը ընդհանուր տեղեկատվությունից շեղելու և արտահայտվող հույզի վրա սևեռելու ունակությամբ:

Ինչ վերաբերում է տարբեր հուզարտահայտչական իրավիճակներում տղամարդկանց և կանանց օգտագործած ձայնարկություններին, կարելի է եզրակացնել, որ *ուրախության և զայրույթի* հույզերը քանակով առավել հաճախադեպ են:

## Եզրակացություն

Բառային միջոցների կիրառության քննությունը բացահայտում է, որ անգլիացի տղամարդիկ իրենց խոսքում օգտագործում են ավելի մեծ թվով *պիտակավորող-գնահատողական բառեր*, քան կանայք (*G-30%, S-70%*): Անգլիացի տղամարդը կնոջը գնահատելիս կիրառում է վերջինիս արտաքինը որակող բառային միավորներ, ընդ որում՝ այս որակումները չեն հակասում անգլիական հասարակության մեջ ընդունված գենդերային կարծրատիպերին: Կանայք տղամարդկանց հասցեին դրական գնահատականներ տալիս օգտագործում են բառային այնպիսի միավորներ, որոնք արտահայտում են տղամարդկանց արտաքին տեսքը, կազմվածքը, խելքը, բարեհոգությունը, ազնվությունը, մեծահոգությունը: Բացասական գնահատականի դեպքում կնոջ խոսքում ի հայտ է գալիս տղամարդկանց ուղղված զգալի քանակությամբ հուզագնահատողական բառապաշար, որն ավելի հաճախ ընդգծում է տղամարդու խոսքի և վարքագծի բացասական հատկանիշները՝ անմտությունը, թույամտությունը, կոպտությունը, դաժանությունը, եսասիրությունը, անկայունությունը հարաբերություններում: Կանանց խոսքում առկա է *ուժգնացնող (G-60%, S-40%)* և *կռչական (G-55%, S-45%) բառերի* կիրառություն, որը միտված է արտահայտելու խոսողի սուբյեկտիվ-գնահատողական, հուզականորեն հագեցած վերաբերմունքը: Կանայք նախընտրում են ավելի շատ գործածել *փոքրացուցիչ-փաղաքշական բառեր* իրենց հուզագնահատողական վերաբերմունքի արտահայտման աստիճանը մեծացնելու նպատակով (*G-70%, S-30%*): Տղամարդկանց կողմից բառագործածության ընտրությունը վերլուծելիս ի հայտ է գալիս զգալի քանակությամբ *նորաբանությունների և տերմինաբանական/մասնագիտական բառերի (G 5%, S-95%)* լայն ու բազմազան կիրառություն: Անգլիական երգիծական խոսույթում, տարբեր խոսքի մասերի կիրառության առումով, տղամարդկանց և կանանց խոսքում էական տարբերություններ չեն արձանագրվել՝ բացառությամբ *ածականների և ձայնարկությունների* կիրառության: Կանանց խոսքում վերջինները փոքրիցատե գերակշռում են (*G-55%, S-45%*): Ըստ վիճակագրական տվյալների՝ տղամարդիկ օգտագործում են ձայնարկություններ *ուրախության, զարմանքի, զայրույթի, տհաճության և ատելության հուզավիճակներում*, իսկ կանանց խոսքին առավելապես բնորոշ է *վախի, թախծի, հիացմունքի, զղջման և հավանության հույզերը* ձայնարկություններով արտահայտելու հակումը:

Ոչինչ այդքան պարզ չի արտացոլում մարդու ընդհանուր կրթական մակարդակը, քաղաքական, փիլիսոփայական, էսթետիկական և բարոյական հայացքները ինչպես նրա խոսքը: Հենց միայն մարդկանց խոսքից կարելի է իմանալ նրանց մտքերը, զգացմունքները և մղումները, պատկերացում կազմել նրանց ընդհանուր զարգացածության մասին: Մարդու խոսքը պայմանավորված է շատ գործոններով՝ նրա սեռով, սոցիալական

դիրքով, տարիքով, մասնագիտությամբ: Տղամարդիկ և կանայք ունեն իրենց հատուկ հոգեբանական առանձնահատկություններ, որոք ներագրում են նրանց խոսքային միջոցների ընտրության վրա և տարբերում նրանց խոսք մյուսների խոսքից: Այդ պատճառով ամեն մի բանավոր կամ գրավոր արտահայտություն կարող է արտացոլել կին-խոսողի կամ տղամարդ-խոսողի անհատականությունը:

### Գրականություն

- Караулов, Ю. Н. (1987). *Русский язык и языковая личность*. Москва, Наука.
- Носенко, Э. Л. (1979). *Особенности речи в состоянии эмоциональной напряжённости*. Днепропетровск, Днепр. гос. ун-т.
- Фомина, З. Е. (1996). *Эмоционально-оценочная лексика современного немецкого языка*: Автореф. дис. ... докт. филол. наук. Москва.
- Шаховский, В. И. (1995). О лингвистике эмоций. *Язык и эмоции*: Сборник научных трудов. Волгоград, Перемена, 3 – 15.
- Christie, C. (2000). *Gender and Language: Towards a Feminist Pragmatics*. Edinburgh, Edinburgh University Press.
- Kramarae, C. (1981). *Women and Men Speaking: Fundamentals for Analysis*. Rowley, Mass., Newbury House.
- Pervin, L. A., John, O. P. (1997). *Personality: Theory and research*. New York, John Wiley & Sons.
- Sharpe, J. (2004). *The Adult Joke Book*. London: Arcturus.
- Joke of the Day: Funny Clean Jokes Daily.  
<http://www.ajokeaday.com/Clasificacion.asp?ID=48&Pagina=5>  
 Joke of the Day: Funny Clean Jokes Daily.  
<http://www.ajokeaday.com/Clasificacion.asp?ID=54&Pagina=5>  
 Joke of the Day: Funny Clean Jokes Daily.  
<http://www.ajokeaday.com/clasificacion.asp?ID=48&Pagina=10>  
 Joke of the Day: Funny Clean Jokes Daily.  
<http://www.jokesoftheday.net/jokes-archive/2015/01/05/>  
 200 Funny Marriage Jokes – Parade. <http://bancuriromanesti.ro/english-jokes/english-marriage-jokes/english-marriage-jokes-9.html>  
 200 Funny Marriage Jokes – Parade. <http://jokes.cc.com/funny-marriage-jokes/7ra4ct/the-husband-s-best-friend>  
 200 Funny Marriage Jokes – Parade. <http://jokes.cc.com/funny-dark-humor/d6vjuu/the-mortician-s-big-discovery>  
 Funny Jokes Funstuff. <http://www.hiren.info/funstuff/funny-jokes/if-i-wasnt-rich>  
 Funny Jokes Funstuff. [http://www.guy-sports.com/jokes/good\\_jokes.htm](http://www.guy-sports.com/jokes/good_jokes.htm)  
 Laughfactory. <http://www.laughfactory.com/jokes/sexist-jokes>



*А. Князян Г. Барсегян – Гендерные различия языковой личности в английском юмористическом дискурсе.* – В данной статье исследуется гендерный аспект эмоциональной языковой личности в английских бытовых анекдотах. Рассматриваются особенности эмоционального уровня гендерной языковой личности, определяются психофизиологические механизмы различий эмотивного поведения мужчины и женщины, а также способы выражения этих различий в вербальной коммуникации. Исследуются языковые особенности (оценочно-маркированная лексика, эмоциональные интенсификаторы, междометия, неологизмы) эмоционального уровня речи мужчин и женщин. Рассматриваются эмоции страха, гнева, радости, печали и удивления.

*Ключевые слова:* гендерные различия, гендерный аспект, языковая личность, юмористический дискурс, оценочно-маркированная лексика

*A. Knyazyan G. Barseghyan – Gender differences of linguistic personality in English humorous discourse.* – The article examines the gender aspect of the emotional linguistic personality in English “everyday” jokes. An attempt is made to consider the features of the emotional level of a gender linguistic personality, to explain the psychophysiological mechanisms of differences in the emotive behaviour of men and women and the ways of expressing these differences in verbal communication. The linguistic features (evaluative lexis, emotional intensifiers, interjections, neologisms) of the emotional level of speech of men and women are studied, and the psychophysiological differences in their emotive behavior are explained. The emotions of fear, anger, joy, sadness and surprise are considered.

*Key words:* gender differences, gender aspect, linguistic personality, humorous discourse, evaluative lexis